



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ

-- ----- 2017 թվականի №---Ա
ք.Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի №105Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով, որ՝

ա) 2017 թվականի օգոստոսի 25-ին «ՔԼԻՆ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով երկարաձգել Հանձնաժողովի 2017 թվականի մարտի 29-ի «ՔԼԻՆ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «ՎԱՅՈՑ ԱՐԵՎ» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №105Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված «ՎԱՅՈՑ ԱՐԵՎ» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0601 լիցենզիայով (այսուհետ՝ ԼԷ №0601 լիցենզիա) ամրագրված կառուցման ժամանակահատվածը մեկ տարի ժամկետով,

բ) Ընկերությունը հայտնել է, որ կառուցման աշխատանքները սահմանված ժամկետում ավարտելուն խոչընդոտել է բանկի կողմից ֆինանսավորման ուշացումը, քանի որ գնահատումը տևել է մոտ 5 ամիս՝ միաժամանակ խնդրելով մեղմացնել տուգանքի չափը կամ հնարավորություն տալ վճարել կայանի կառուցումից հետո,

գ) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 39-րդ կետի համաձայն՝ արտադրության լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը կարող է երկարաձգվել նախկինում սահմանված կառուցման ժամանակահատվածից ոչ ավելի,

ե) Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցվող երաշխիքային

գումարի նվազեցման և կայանի կառուցումից հետո գումարի վճարման ընթացակարգեր
Կարգով սահմանված չեն, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-
րդ հոդվածի 1-ին կետը, Կարգը, այդ թվում՝ Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների
ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 8-րդ կետի 1-ին ենթակետը՝
Հանձնաժողովը **որոշում է.**

1. Վեց ամիս ժամկետով երկարաձգել ԼԷ №0601 լիցենզիայով ամրագրված կառուցման
ժամանակահատվածը՝ Հանձնաժողովի 2017 թվականի մարտի 29-ի «ՔԼԻՆ ԷՆԵՐՋԻ»
սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «ՎԱՅՈՑ ԱՐԵՎ» արևային
էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա
տրամադրելու մասին» №105Ա որոշման մեջ «մինչև 2017 թվականի սեպտեմբերի 30-
ը» բառերը փոխարինելով «մինչև 2018 թվականի մարտի 31-ը» բառերով:
2. Ընկերությանը՝ ԼԷ №0601 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով
«ՎԱՅՈՑ ԱՐԵՎ» արևային էլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը
երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝
 - 1) մեկամսյա ժամկետում «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ» փակ բաժնետիրական ընկե-
րության 2017 թվականի մարտի 2-ի №01-198 գրությամբ ներկայացված №174406127
բանկային երաշխիքի համաձայն երաշխավորված երկու միլիոն հինգ հարյուր
հազար դրամ գումարից մեկ միլիոն երկու հարյուր քառասուներկու հազար դրամը
900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության
պետական բյուջե.
 - 2) քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել երկու միլիոն չորս
հարյուր ութսունչորս հազար դրամ գումարի երաշխիք՝ մինչև 2018 թվականի
մայիսի 15-ը գործողության ժամկետով:
3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ
մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ
Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի սեպտեմբերի 30-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ